Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Թեմա՝ Ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը երաժշտության դասերին

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Նաիրա Քոսակյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Երաժշտությունը և երաժշտական կրթությունը 4

1.1. Ուսումնական մեթոդներ 6

1.2. Երաժշտության դասի կազմակերպումը 9

1.3. Մեթոդների միջոցով իրականացվող նպատակներ ու խնդիրներ …….. 10

Գլուխ 2. Մեթոդների գործնական կիրառությունը 11

2.1. Պասիվ, ակտիվ և փոխներգործուն մեթոդներ 11

2.2. Գործնականում կիրառվող փոխներգործուն մեթոդներ … 14

Եզրակացություն 24

Օգտագործված գրականության ցանկ 25

Ներածություն

Երաժշտությունը, ինչպես մայրենի լեզուն, ազգի մտածողությունը, ինքնուրույնությունն ու գոյությունը պահպանող միջոց է:

Երաժշտությունը արվեստի մյուս տեսակների նման արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունն ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել, արարել:

<<Երաժշտության>> դասերը սովորողներին հնարավորություն են ընձեռում ունկնդրել, երգել, նվագել, ստեղծագործել: Խաղերով և կիրառվող մեթոդներով զարգանում է աշակերտների երաժշտական կարողությունները: Այդ ամենը նպաստում է նրանց գեղագիտական դաստիարակությանը: Երաժշտական կրթությունն անմիջաբար հենվում է մարդու կենցաղին, արտացոլում նրա ուրախություններն ու տխրությունը: Մեծ է նաև երաժշտության դաստիարակչական և ճանաչողական նշանակությունը սովորողների աշխարհայացքային և արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում:

Ծրագրային նյութի թեմատիկ կառուցվածքը հնարավորություն է տալիս ոչ միայն տրամաբանական կապ ստեղծել առանձին դասերի միջև, այլև այդ կապի շնորհիվ, հենվելով դիդակտիկայի և երաժշտական արվեստի օրինաչափությունների վրա, ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառմամբ, զարգացնել երեխայի երաժշտական ունակությունները: Ցանկացած առարկայի ուսումնական գործընթաց պետք է իրականացվի առարկայի չափորոշչի պահանջներին և ծրագրային խնդիրներին համապատասխան:

Հետազոտությունը նպատակ ունի պարզելու, թե որքանո՞վ ենք մենք տիրապետում ուսուցման ժամանակակից և ավանդական մեթոդներին, ուսուցման նպատակով մեր կողմից ընտրված կամ արդեն կիրառվող մեթոդները որքանո՞վ են համապատասխանում <<երաժշտություն>> առարկայի ուսուցման նպատակներին և չափորոշիչներին: Որքանո՞վ է արդյունավետ ժամանակակից մեթոդների կիրառումը երաժշտության դասերի ընթացքում, և որքանո՞վ է այն դարձնում դասապրոցեսը հետաքրքիր, մատչելի ու արդյունավետ:

Գլուխ 1. Երաժշտությունը և երաժշտական կրթությունը

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա հասունացումը: Տարրական և միջին դպրոցի երաժշտություն դասավանդող ուսուցչի խնդիրն է՝ սովորողին ոչ միայն երգել սովորեցնել, այլ նաև հաստատել երեխայի հոգևոր հիմքը, բացահայտել նրա որակները, զարգացնել գեղագիտական ճաշակ, սեր սերմանել ազգային և համաշխարհային մշակույթի հանդեպ, ցույց տալ արդյունավետ ուսումնական գործունեության ուղիներ:

Կրթության պայմաններում մշակույթը միակ ոլորտն է, որտեղ կարող են օրինաչափ զարգանալ հասունացող մարդու բարոյահուզական հատկանիշները:

<<Երաժշտություն>> առարկայի դասավանդումը դպրոցում զգալիորեն տարբերվում է մյուս ուսումնական առարկաներից: Այն արվեստի դաս է, որի միջոցով աշակերտները կապվում են երաժշտությանը: [4]

Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին: Երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ:

Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ-անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որն ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես ուսումնառության նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների,

հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

Երաժշտության ուսուցման և դաստիարակության աշխատանքներում կողմնորոշիչ է ոչ միայն երաժշտության ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը, այլև ուսուցման նոր մոտեցումների և տեխնոլոգիաների իմացությունը:

Ուսուցչի աշխատանքը ստեղծագործական գործընթաց է: Ամեն անգամ դասի գնալուց առաջ ուսուցիչը մտածում է, թե ինչ և ինչպես պիտի սովորեցնի աշակերտներին: <<Ի՞նչ սովորեցնելու>> բովանդակությունը և <<Ինչպե՞ս սովորեցնելու>> մեթոդները կապի մեջ են տվյալ ժամանակաշրջանի հասարակության զարգացման գործընթացի հետ: Այսօր էլ այդ գործընթացը շարունակվում է: Ինչպես Կոմիտասն էր ասում՝ <<… յուրաքանչյուր ազգ, ինչ որ չունի, ունեցողներեն պետք զգացած ժամանակ փոխ կառնե և կազգայնացնե>>:

Հայ մանկավարժների մի ստվար խումբ որդեգրել է տարբեր երկրներում գոյություն ունեցող ուսումնական նոր մոտեցումների, ձևերի և մեթոդների մարտավարությունը, որն ուղղված է աշակերտների ներուժի բացահայտմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Այդ մեթոդական նորությունները հիմնականում կապված են համագործակցային և փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդների հետ:

Պատմականորեն ձևավորված ուսուցման ավանդական և նոր մեթոդների միասնությունը առաջ է քաշում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերության նոր մոտեցումներ: [2]

1.1. Ուսուցման մեթոդներ

Ուսուցման և դաստիարակության ամբողջ ընթացքում աշակերտներին հնարավորություն է տրվում իրենց զգացածի, դիտումների և մտորումների մեջ լինել ինքնուրույն: Ուսուցիչը միջամտում է միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը զգացվում է: Այս դեպքում ուսուցիչը կիրառում է ուսուցման մանկավարժական մի շարք սկզբունքներ և մեթոդներ: Այսպես, հենց առաջին դասարանից կիրառվում է <<նմանության և զանազանության>> կարևորագույն սկզբունքը: Այդ սկզբունքը հնարավորություն է տալիս զարգացնելու երեխայի միտքը, դատողությունը՝ զուգահեռաբար հարստացնելով նրա զգայական աշխարհը: Այն օգնում է ձևավորել երեխաների երաժշտական մտածողությունը, աշխարհայացքը:

Ուսուցման արդյունավետ մեթոդներից է <<ընդհանրացման>> մեթոդը, որի նպատակն է ընկալման միջոցով երաժշտության այս կամ այն օրինաչափությունը երեխայի գիտակցությանը հասցնել՝ հենվելով նրա երաաժշտական և կյանքի փորձի վրա:

Այս մեթոդի կիրառումը զարգացնում է երեխայի ընկալումը և մտածողությունը, տրամաբանությունը, երաժշտության մեջ ինքնուրույն կողմնորոշվելուընդունակությունը:

Նույնպես արդյունավետ է <<առաջ անցնելու>> և անցածին <<վերադառնալու>> մեթոդը: <<Առաջ անցնելը>> յուրատեսակ հետախուզություն է, որի միջոցով որոշվում է, թե որքանով է երեխաների գիտակցությունը նախապատրաստված նոր նյութի ըմբռնմանը: Ինչպես Դ. Կաբալևսկին է ասում՝ դա երեխաների համար <<ընդերքի նախնական փխրեցում>> և <<հորիզոնի պարզեցում>> է: Անցածին <<վերադարձը>> երբեք պարզ կրկնություն չպետք է լինի. այս անգամ երեխան պետք է տեսնի այն, ինչ նաախկինում տեսանելի չի եղել:

Այս ամենը նախապայման է ստեղծում՝ հրապուրվել երաժշտությամբ, դրանով իսկ ակտիվացնելով երաժշտության ընկալումը, ստեղծելով համապատասխան ստեղծագործական մթնոլորտ, որի ներքո ուսուցման և դաստիարակության գործընթացը դառնում է հետաքրքրական, հուզական, հրապուրիչ և հասկանալի: [1]

Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով, ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ, կամայական լինել, շատ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակահարմար ընտրությունը:

Մեթոդն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Սովորողը պետք է հստակ իմանա՝ ինչ է անում և ինչու, պետք է մշտապես տեղյակ լինի ՝ ինչ է իրենից ակնկալվում, պետք է վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու, օգնելու է իրեն:

Ժամանակակից մանկավարժության մեջ մեթոդների դասակարգման հիմքում ընկած են տարբեր մոտեցումներ, որոնք երբեմն դասակարգվում են ըստ ճանաչողության աղբյուրների՝ ուսուցման խոսքային, դիտողական, գործնական մեթոդներ: Առանձին դեպքերում դասակարգումը կատարվում է ըստ գիտելիքների ձեռք բերելու միջոցների ուսուցչի և սովորողի գործունեության բնույթի: Հաճախ հանդիպում են բացատրական, ցուցադրական, վերարտադրողական, մասնակի որոնողական և հետազոտական համարվող տարբերակումները:

Առավել տարածված է մի մոտեցում, ըստ որի ուսուցման մեթոդները պայմանականորեն կազմում են երկու խումբ՝ ավանդական և ժամանակակից կամ փոխներգործուն:

Ավանդական համարվում են բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը, այդ դեպքում սովորողն ուսուցչի հրահանգների պասիվ կրողն է:

Ժամանակակից մեթոդների հիքում ընկած է ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա ակտիվ և անմիջական մասնակցությունը:

Արդյունավետ դասավանդում իրականացնող գործոններ են նաև մեթոդական հնարներն ու վարժությունները:

Մեթոդը և հնարը նույնը չեն, ուղղակի ունեն որոշակի հարաբերակցություն: Եթե մեթոդը դեպի ուսումնական նպատակ տանող ճանապարհն է, ապա մեթոդական հնարները, վարժությունները ճանապարհի ընթացքի խնդիրները լուծելու, հանդիպող դժվարությունները հաղթահարելու միջոցներ են:

Հնարը սովորաբար անկախ կիրառություն ունի, սակայն երբեմն մեխանիկորեն նույնացվում է մեթոդին կամ էլ համարվում է նրա բաղադրիչ տարրը:

Փորձառու ուսուցիչները թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից մեթոդներ կիրառելիս կարողանում են օգտվել նաև իրենց կողմից ստեղծված հնարներից:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում է նաև <<գծագրական դասակարգիչներ>> հասկացությունը, սրանք երբեմն անվանվում են գրաֆիկական կազմակերպիչներ:

Գծագրական դասակարգիչներ հասկացության մեջ ընդգրկված են հասկացությունների աղյուսակը, T-աձև և m-աձև աղյուսակները, հասկացությունների քարտեզը, Վենի դիագրամը, պրիզման: Սրանք մտածողության ընթացքն առավել առարկայական, շոշափելի և ակնառու դարձնող միջոցներ են և օգտագործվում են դասի տարբեր փուլերում:

1.2. Երաժշտության դասի կազմակերպումը

Երաժշտության դասը, լինելով արվեստի դաս, ունի համալիր բնույթ: Պետք է կարողանալ մեկ դասի ընթացքում աշակերտների երաժշտական գործունեության բոլոր տեսակները /երգեցողություն, ունկնդրում, երաժշտառիթմական շարժում, նվագ,իմպրովիզացիա/ միահյուսել այնպես, որ գործունեության մի տեսակը հաջորդի մյուսին՝ պահպանելով դասի թեմայի ներքին տրամաբանությունը, ամբողջականությունը:

Ուսուցիչը մեկ դասի ընթացքում կարող է կիրառել երաժշտական գործունեության վերոհիշյալ բոլոր տեսակները կամ մի մասը: Առհասարակ երաժշտության ունկնդրումից և երգեցողությունից հետո լավ է անցնել երաժշտառիթմական շարժմանը: Այն հուզական նոր լիցք է հաղորդում և ակտիվացնում երեխաներին, որի հետևանքով տեղի է ունենում ուշադրության կենտրոնացում՝ նպաստելով աշակերտի մտածելուն և ինքնուրույն գործելուն:

Աշակերտը ողջ դասի ընթացքում անընդմեջ երաժշտական գործունեության բոլոր տեսակներով զբաղվելիս սովորում է ոչ միայն երաժշտություն լսել, այլև մտորել երաժշտության մասին: Այս միջոցով զարգանում է նաև սովորողների ստեղծագործական երևակայությունը:

Ուսուցիչը պետք է կարողանա դասը դարձնել ստեղծագործական ընթացք: Չպետք է բավարարվել պատրաստի պատասխան-ճշմարտություններով: Աշակերտը հարցերի միջոցով պետք է մտորի և մտահանգման գա ինքնուրույն: Պետք է աշակերտների մեջ մշակել սեփական նախաձեռնություն դրսևորելու ձգտում: Այն անհրաժեշտ է ոչ միայն երաժշտության դասի համար, այլև աշակերտի ապագա գործունեության բոլոր բնագավառներում և կյանքում: [1]

Հենց այդտեղ էլ անհրաժեշտ և պարտադիր է դառնում ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը:

1.3. Մեթոդների միջոցով իրականացվող նպատակներ ու խնդիրներ

Մեթոդների միջոցով իրականացվում են հետևյալ նպատակներն ու խնդիրները.

- Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:
- Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:
- Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունը, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները:
- Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը:
- Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգևոր հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր:
- Կարողանալ ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները կիրառել կյանքում:

Գլուխ 2. Մեթոդների գործնական կիրառությունը

2.1. Պասիվ, ակտիվ և փոխներգործուն մեթոդներ

Մեթոդների ընտրությունը կախված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված գործընթացի միջոցով: Երաժշտության ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու և համադրելու հմտությունը:

Բաժանվում են 3 խմբի՝

1. պասիվ
2. ակտիվ
3. փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդ:

1. Պասիվ մեթոդը աշակերտի և ուսուցչի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ ուսուցիչը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ աշակերտները պասիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Աշակերտների և ուսուցչի կապը պասիվ ուսումնական տարբերակում պահպանվում է երաժշտության դասերին հիմնականում հարցումների միջոցով: Եթե այդ գործընթացը ցուցադրենք գծապատկերով, կունենանք այսպիսի տեսք.



Այս մեթոդը ժամանակակից տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից համարվում է ամենից անարդյունավետը, բայց ունի նաև մի շարք առավելություններ՝ այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով նյութի մատուցման հնարավորություն: Այս մեթոդը այսօր էլ տարածված է ուսուցման գործընթացում:

2. Ակտիվ ուսուցումը ոչ թե աշակերտի կողմից պատրաստի գիտելիքի իմացությունն է, մտապահումն ու վերարտադրությունը, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերումն է: Դա նշանակում է, որ ուսուցիչը և աշակերտը իրար հետ գտնվում են հավասար փոխհարաբերության մեջ: Ուսուցումը ակտիվացնելու համար կիրառվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակների ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ խնդիրներ:



3. Ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդ

Եթե ակտիվ մեթոդի դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում աշակերտները և ուսուցիչը, ապա այս մեթոդի ժամանակ աշակերտները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է աշակերտի դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը առաջատար դերում չէ, նրա դերը կրթության գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացմանն ուղղորդելն է:Ուսուցման այս մեթոդը ընկալվում է որպես աշակերտակենտրոն գործընթաց, որի ընթացքում տեղի է ունենում եռակողմ փոխհարաբերություն՝

ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-աշակերտ: Նման պայմաններում ուսուցման գործընթացը դառնում է գերակտիվ և գերարդյունավետ:



Այս պարագայում ուսուցիչը դառնում է ոչ միայն գիտելիքներ փոխանցող, այլև ուսումնական աշխատանքները կազմակերպող, աշակերտների զարգացման ու դաստիարակման գործընթացն ուղղորդող, աշակերտների հետ ակտիվ երկխոսության մեջ գտնվող, <<սովորել սովորեցնող>>:

Նման մեթոդների կիրառմամբ ավելի է մեծանում ուսուցման նպատակներին հասնելու հնարավորությունը: [2]

2.2. Գործնականում կիրառվող փոխներգործուն մեթոդներ

Փոխներգործուն մեթոդների կիրառման շնորհիվ դասերն անցնում են հետաքրքիր և առավել արդյունավետ: Դա հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները: Դասավանդման մեթոդների արդյունավետ կիրառման քարացած և ընդհանուր բանաձևեր չկան: Ուսուցիչն իր ստեղծագործական մոտեցմամբ պետք է հասնի դասի նախապես ծրագրավորված նպատակին: Ամեն ուսուցիչ ուսուցման գործընթացը կազմակերպում է յուրովի, իր մասնագիտական հմտությունների սահմաններում՝ օգտագործելով տարբեր մեթոդներ: [4]

Նոր նյութի ընկալման ժամանակ բացահայտվում է աշակերտների ունեցած գիտելիքները՝ ուսուցվող նոր թեմայի հետ կապված: Դա մտքի նախնական ակտիվացման միջոց է: Այդ աշխատանքները երեխաների մեջ առաջ են բերում շահագրգռվածություն՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու ձգտում: Այս փուլում կարելի է կիրառել <<Վենի դիագրամ>>, <<Մտագրոհ>>, <<Պրիզմա>>, <<Ձնագնդի>> կոչվող մեթոդները:

Նոր նյութի հիմնական գաղափարը տրվելիս կիրառվում են ուսուցման բազմաթիվ մեթոդներ, հնարներ, որոնք կարողանում են պահպանել սովորողների ակտիվությունը, հետաքրքրությունը, ինքնավերահսկումը, նորի և անցածի շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը: Այս փուլում օգտագործվում են հետևյալ մեթոդները. <<Հասկացությունների քարտեզագրում>>, <<Т-աձև աղյուսակ>>,
<<Վենի դիագրամ>>, <<Այցելություն պատկերասրահ>> և այլն:

Դասի վերջին փուլում սովորողները յուրացրած նոր գիտելիքները հանրագումարի են բերում՝ դրանք դարձնելով իրենց սեփականությունը: Այս փուլում կիրառվում են մեթոդներ, որոնք ակտիվացնում են սովորողների միտքը, ընկալումը, ինքնուրույն արտահայտվելու կարողությունը, նպաստում ստեղծագործական զարգացմանը: Դրանք են <<Վենի դիագրամ>>, <<Հասկացոիթյունների քարտեզագրում>>, <<Т-աձև աղյուսակ>> և այլն: [2]

<<Մտագրոհ>> մեթոդը պարզագույն, բայց շատ արդյունավետ և ամենից շատ կիրառվող մեթոդներց է: Այս մեթոդը նաև մտքերի տարափ են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Աշակերտներից յուրաքանչյուրը կարող է արտահայտել սեփական տեսակետը, առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: [5]

<<Մտագրոհ>> մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտներին արտահայտելու իրենց մտքերը նոր թեմայի մասին: Օրինակ՝ <<Երաժշտության զարգացում>> թեման անցնելիս դասի ընթացքում՝ առաջին փուլում կիրառվում է այդ մեթոդը: Գրատախտակի կենտրոնում նկարում ենք շրջանակ և մեջը գրում թեման: Աշակերտները այդ թեմայի մասին ինչ գիտեն, գրում են շրջանակի շուրջը:



Նշված երաժշտական արտահայտչական միջոցներից յուրաքանչյուրը նպաստում է երաժշտության զարգացմանը: <<Մտագրոհ>> մեթոդը նպաստում է աշակերտների տարատեսակ (բազմաբնույթ) մտածողության զարգացմանը, որի մեջ է մտնում նաև երաժշտական մտածողությունը: [2]

<<Մտագրոհ>> մեթոդը օգտագործում եմ 1-ին դասարանի 1-ին դասաժամերից սկսած: Այս մեթոդի միջոցով պարզում եմ աշակերտների նախնական իմացությունը կոմպոզիտորների մասին, նրանց ստեղծագործությունների մասին և առհասարակ ուսումնասիրվող նյութի մասին (երաժշտություն, նյութ, կերպար, նվագարան և այլն):

<<Վենի դիագրամ>> մեթոդը կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով, որոնք կենտրոնում հատման որոշակի մակերես ունեն: Կենտրոնում նշվում է գաղափարների, երևույթների, առարկաների և անձերի ընդհանրությունները: <<Վենի

դիագրամ>> մեթոդը կարելի է կիրառել դասի բոլոր փուլերում: Այս դիագրամը կարելի է օգտագործել մտքերը կամ կերպարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: Օրինակ՝ օպերա և բալետ ժանրերի ծանոթացման ժամանակ ցույց են տրվում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: [2]



2-րդ դասարանում այս մեթոդը օգտագործում եմ նաև երաժշտության տեսակներն անցնելիս: Դիագրամի միջոցով ակնառուացվում են երաժշտության 3 տեսակները՝ երգ,պար, քայլերգ՝ իրենց առանձնահատկություններով:



հ

ն

չ

ե

ր

ա

ն

գ

,

ռ

ի

թ

մ

,

պ

ա

ր

ա

յ

ի

ն

պարերգ,

<<Վենի դիագրամի>> միջոցով կարելի է համեմատել նաև կերպարներ, կոմպոզիտորներ: Օրինակ՝ 2-րդ դասարանում ներկայացնում և համեմատում ենքԿոմիտաս և Արամ Խաչատրյան կոմպոզիտորներին:



<<Ուրիշմա>> մեթոդը աշակերտներին հնարավորություն է տալիս անկաշկանդ մտորել թեմայի շուրջ: Այս մեթոդի նպատակն է ներկայացվող նյութի, հասկացության, գաղափարների վերաբերյալ ենթագիտանցական ոլորտի եղած ասոցիատիվ կապերի

վերհանում և արձանագրում: Մեթոդը կիրառվում է դասի և՛ առաջին, և՛ վերջին փուլերում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը: Մեթոդը ենթադրում է արագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացում և մասնակիցների համաձայնեցված գործողություններ: Անհատական և խմբային քննարկումների նման ձևը ապահովում է ակտիվությունը, աշխուժությունը, թարմությունը և այլն: [2]

Սկզբում տրվում է մեկնաբանության ենթակա հիմնական հասկացությունը, միտքը, թեման: Առավել արդյունավետ է 3 շերտով բացված պրիզման: Պրիզման եզրափակվում է վերջնաբառով: Ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է, որ պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության կան մեկ մտքի մեջ: Վերջին քայլում մեկնաբառն ու վերջնաբառը մեկ մտքի կամ նախադասության մեջ կապելը ակտիվացնում է գիտակցական ոլորտը: Ուսուցչի կողմից լրացվում են առաջին և վերջին ուղղանկյունները: Հետո հաջորդաբար լրացվում են բոլոր ուղղանկյունները: Վերջում քննարկվում են 1-ինը 5-րդին կապող հասկացությունները: [5]



<<Т-աձև>> աղյուսակն օգտագործվում է միևնույն հասկացության երկու կողմերը համեմատելու համար: Սա

գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և՛ կազմակերպական ձևով, և՛ կառուցվածքով: Այն կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Т տառը հիշեցնող աղյուսակը կազմված է 2 բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկաության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար: [5]

Т-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումն արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում: 3-րդ դասարանում <<Հեքիաթը երաժշտության մեջ>> թեման անցնելիս դիտում և ունկնդրում ենք ռուս կոմպոզիտոր Սերգեյ Պրոկոֆյևի <<Պետյան և գայլը>> սիմֆոնիկ հեքիաթը: Երաժշտությունից կռահում ենք, թե ինչպիսին են հեքիաթի հերոսները: Եվ Т-աձև աղյուսակի միջոցով ակնառուացվում, համադրվում ու հակադրվում են հերոսների վարքագծերը:

<<Քառաբաժան>> մեթոդը օգտագործվում է հիմնականում դասանյութի յուրացումը ստուգելու նպատակով: Գրատախտակը բաժանում եմ 4 հավասար մասերի, յուրաքանչյուր քառորդ մասի վերևում գրում ուսումնասիրվող թեմային վերաբերվող մեկ հարց: Թեման կարող է լինել երգ, նկար, ստեղծագործություն և այլն: Հիմնական տրվող հարցերն են.

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ հասկացա կամ Ի՞նչ զգացի	Նոր վերնագիր

Կարող են փոփոխվել նաև քառաբաժանի հարցերը:

<<Հնգյակը>> իրենից ներկայացնում է մի բանաստեղծություն, որի ստեղծման համար անհրաժեշտ է ստացած ինֆորմացիան, գիտելիքները համադրել ու արտահայտել դիպուկ արտահայտություններով, որոնք պարունակում են թեմայի

նկարագրություն կամ դրա մասին դատողություն: Բանաստեղծությունը գրելու համար աշակերտին տրվում է հնգյակ գրելու ուղեցույցը, որը հետևյալն է.

- Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը, սովորոբար՝ գոյական:
- Երկրորդ տողը բաղկացած է հասկացությունը նկարագրող երկու բառից, սովորաբար՝ ածական:
- Երրորդ տողը կազմված է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ:
- Չորրորդ տողը բաղկացած է չորս բառից կազմված արտահայտություններից, որոնք ցույց են տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք:
- Վերջին տողը մեկ հոմանիշ բառ է, որը այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Մինչ աշակերտները կգրեն հնգյակներ, ես ներկայացնում եմ իմ կողմից կազմված հնգյակների օրինակներ:

Քայլերգ
Խրոխտ, մանկական,
Քայլել, դոփել, շարժվել,
Անմիջապես քայլելու ցանկություն առաջացնող,
Երաժշտություն:

Բալետ
Պարային, սիմֆոնիկ,
Բեմականացնել, պարել, նվագել,
Խաղալ պարային շարժումների
միջոցով,Ներկայացում:

Այնուհետև առաջարկում եմ աշակերտներին որևէ թեմայի շուրջ գրել հնգյակներ, քննարկել ընկերոջ հետ և ներկայացնել: Հնգյակները լավ միջոց են ստացված տեղեկատվությունը համադրելու, աշակերտի ընկալումը ստուգելու և այն

ստեղծագործաբար արտահայտելու համար: Այն դասի վերջին փուլի արդյունավետ միջոց է:

<<Ակրոստիքոս>> (անվանակապ, բանակապ կամ եզրատող) մեթոդը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը և ակտիվացմանը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու անկաշկանդվածություն, բացահայտում է նրանց ունակությունները, առաջացնում է հավատ սեպական ուժերի նկատմամբ: Մեթոդի էությունը հետևյալն է. Գրել թեմային վերաբերվող ցանկացած բառ, բառակապակցություն և հորինել բանաստեղծություն՝ յուրաքանչյուր տող սկսելով գրված բառի հերթական տառերով: Այնուհետև հորինել երաժշտություն:

ԵՐԳ

Ե՛վ երգում ենք, և՛
պարում,Ռոպեներին մեր
խնդուն,
Գովերգում ենք, թռվռում, երաժշտություն ենք սիրում:

ՊԱՐ

Պույպույ մկնիկը երգեց,
Ամեն երգի հետ պարեց,
Ռոպեները գովերգեց, որ կոկոսից ազատվեց:

ՔԱՅԼԵՐԳ

Քայլում ենք մենք ու երգում,
Այսօրվա դասն ենք սերտում,
Յուրահատուկ այս դասին
Լսում ենք նոր մեղեդի:
Ե՛վ քայլում ենք, և՛
երգում,Ռոպեներին այս
խնդուն,
Գովերգում ենք, թռչկոտում, նոր երգեր ենք սովորում:

<<Շրջագայություն պատկերասրահում>> մեթոդը <<Խճանկար>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և

ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

- ✓ Ուսուցիչն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբի տալիս դրանցից մեկը՝ ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը ուսումնասիրում է 2 խումբ:
- ✓ 4 հոգուց բաղկացած խմբերն աշխատում են տվյալ մասի վրա (ցանկալի է, որ առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ առաջարկվեն և ստեղծում նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ և այլն):
- ✓ Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով պատկերասրահ:
- ✓ Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը և կազմում 4 նոր խումբ՝ ըստ իրենց համարների (դասարանի բոլոր <<1>> համարները՝ մի խումբ, <<2>>-ները՝ ուրիշ խումբ և այլն):
- ✓ Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:
- ✓ Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծում առաջացած հարցերը:

Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Չորրորդ դասարանում <<Հայկական ժողովրդական երգեր>> թեման ամփոփելիս կարելի է կիրառել այս մեթոդը: Դասարանը բաժանվում է 5 խմբի: Յուրաքանչյուր խմբի համապատասխանաբար տրվում է <<Աշխատանքային երգեր>>,

<<Ծիսական երգեր>>, <<Պանդխտության երգեր>>, <<Հայրենասիրական երգեր>>,

<<Մանկական երգեր>> թեմաները: Աշակերտները աշխատում են խմբերով,պատրաստում են պաստառ, պաստառին կից նաև երգեր: Շրջելով <<պատկերասրահում>>՝ աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքները,նաև երգերը:

Ընդհանրապես յուրաքանչյուր դասի վերջում օգտագործում եմ <<5 հարց ու պատասխան>> մեթոդական հնարը, որի միջոցով փորձում եմ հասնել տրված վերջնարդյունքներին:

1. Ես այսօր սովորեցի …
2. Այսօրվա դասի ամենաօգտակար բանը …
3. Այս դասին ինձ ամենաշատը դուր եկավ …
4. Մի բան, որ չհասկացա …
5. Այս դասին ավելին կսովորեի, եթե …

Աշակերտների համար շատ հետաքրքիր են նաև տեսադասերը՝ մուլտֆիլմեր դիտելը, երաժշտություն ունկնդրելը, օպերա և բալետ դիտելը, ինչպես նաև դրանց ունկնդրումը: Որպեների ընթացքում նրանք կարող են իրենց զգալ մեծ դահլիճում և որպես հանդիսատես դիտել, ունկնդրել և յուրացնել ուսուցանվող նյութը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ երաժշտության դասը արդյունավետ կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով, որն էլապահովում է դասի վերջնարդյունքները:

Պրակտիկայում գոյություն ունեն շատ այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդներ, որոնք հիմնված են մատուցվող նյութը ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ և այլն: Բայց քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասիվ, կամ տվյալ պահին աշակերտի մոտ կարող են առաջանալ այնպիսի հարցեր, որ նախապես պլանավորված մեթոդը <<չաշխատի>>, ուրեմն այս բաժանումները կարիք ունեն հստակեցման:

Այստեղ էլ արժևորվում են ուսուցչի մասնագիտական կարողությունները, մեթոդների իմացությունը, ինչպես նաև դրանք կիրառելու և համադրելու հմտությունը:

Գրականության ցանկ

1. Երաժշտություն առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան 2007
2. Յու. Վ. Յուզբաշյան, Ա.Ա. Փահլևանյան, Վ. Ի. Ավետիսյան <<Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում>> /ուսուցչի ձեռնարկ/
3. Յու. Վ. Յուզբաշյան, Ա.Ա. Փահլևանյան, Վ. Ի. Ավետիսյան <<Երաժշտությունը 5-7-րդ դասարաններում>> /ուսուցչի ձեռնարկ/
4. Նախաշավիղ 1.2014
5. Ս. Ս. Սարուխանյան, Ա. Ա. Դալլաքյան, Ն. Հ. Դիշաղաջյան /մեթոդական ձեռնարկ/